## Օրենքները պետք է ավելի ճկուն լինեն

Հայաստանում ներդրումային քաղաքականության եւ գործարար դաշտի համար ստեղծված պայմանների մասին երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ խոսեցին գործարար **Վահագն Հովնանյանը** եւ ԱԺ պատգամավոր **Մանվել Բադեյանը**: Վահագն Հովնանյանի խոսքերով, տարիների ընթացքում Հայաստանը ներդրումային քաղաքականության առումով գնալով հետաքրքիր է դառնում ներդրողների համար: Դրան նպաստում են նախ՝ հստակեցված օրենքները: *«Օրենքները պետք է ավելի ճկուն լինեն եւ հնարավորություն տան գործատուին եւ աշխատողին ազատ գործել: Չպետք է սահմանափակել աշխատաժամը, եթե աշխատողը ուզում է աշխատել»*,–նշեց գործարարը:

Մանվել Բադեյանը պարզաբանեց, որ օրենքը ոչ մի արգելք չի դնում, պարզապես կան հստակ սահմանված աշխատանքային ժամեր եւ օրեր, սակայն օրենքը չի սահմանափակում աշխատանքը: *«Այսօր ամբողջ աշխարհում ճգնաժամի պատճառով բիզնես ակտիվությունը նվազում է: Հայաստանն այսօր այս գլոբալ խնդրից բացի ունի նաեւ այլ սահմանափակումներ՝ աշխարհագրական դիրքը, շուկայի փոքր ծավալները, մոնոպոլիզացումը եւ քաղաքական իրավիճակը»*,–նշեց ԱԺ պատգամավորը եւ հավելեց, որ պակաս կարեւոր չեն նաեւ կառավարման հմտության եւ վարչարարության գործոնները:

## ԳԱԱ ղեկավարության ընտրություններն ավարտվեցին

Երեկ ավարտվեցին ՀՀ ԳԱԱ ղեկավարության ընտրությունները: Մաթեմատիկական եւ տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարի պաշտոնում վերընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Նորայր Առաքելյանը:

ԳԱԱ մամուլի ծառայության հաղորդմամբ, ֆիզիկայի եւ աստղաֆիզիկայի բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարի պաշտոնում վերընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Չիլինգարյանը: Բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարի պաշտոնում վերընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վիլեն Հակոբյանը:

Քիմիական եւ երկրի մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարի պաշտոնում ընտրվեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ ԳԱԱ Ա.Բ. Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտի տնօրեն Լեւոն Թավադյանը: Հայագիտության եւ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարի պաշտոնում ընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտոր Յուրի Սուվարյանը:

Նորընտիր ակադեմիկոս-քարտուղարները, ինչպես նաեւ ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը, ՀՀ ԳԱԱ փոխնախագահ Յուրի Շուքուրյանը եւ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար Հրանտ Մաթեւոսյանը ի պաշտոնե ընդգրկվեցին ՀՀ ԳԱԱ նախագահության նոր կազմի մեջ: ՀՀ ԳԱԱ նախագահության ազատ անդամներ ընտրվեցին ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Լենսեր Աղալովյանը, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Էդուարդ Ղազարյանը, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վանիկ Զաքարյանը, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Կառլեն Ադամյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արամ Պապոյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Գեւորգ Պողոսյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արամ Սիմոնյանը:

ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը գոհունակություն հայտնեց այն միասնականության համար, որը ցուցաբերվեց ՀՀ ԳԱԱ ղեկավարության ընտրությունների ժամանակ եւ վստահություն հայտնեց, որ նման միասնականություն կցուցաբերվի նաեւ գիտության զարգացման ծրագրերի իրականացման, հասարակության կյանքում ակադեմիայի եւ գիտնականի դերի ամրապնդման գործում:

5-ամյա արդյունավետ աշխատանքի համար ՀՀ ԳԱԱ նախագահը շնորհակալություն հայտնեց ՀՀ ԳԱԱ նախագահության անդամներին, հատկապես նրանց, ովքեր չընդգրկվեցին ՀՀ ԳԱԱ նախագահության նոր կազմում՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանին, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանին, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ադոլֆ Մանթաշյանին, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Արամ Շահինյանին, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռոբերտ Աթոյանին:

## Հայաստանի հավաքականը միանձնյա առաջատար է Մոսկվայում

Մոսկվայում անցկացվում է Վլադիմիր Դվորկովիչի հիշատակին նվիրված ավանդական պատանեկան շախմատային մրցաշար՝ Հայաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելառուսի, Ադրբեջանի, Ղազախստանի, Չինաստանի հավաքականների եւ «Դվորկովիչի հյուրասենյակ» թիմի մասնակցությամբ:

Հայաստանի հավաքականը երրորդ տուրում 3:1 հաշվով պարտության մատնեց Ռուսաստանի ընտրանուն եւ շարունակում է պահպանել երեք միավորի առավելությունը երկրորդ տեղում ընթացող Ադրբեջանի թիմի նկատմամբ:

Վերջինս, իր հերթին, հաշվետու տուրում 3:1 հաշվով հաղթեց Բելառուսի հավաքականին:

Ավելացնենք, որ Հայաստանի հավաքականն անցկացրած հանդիպումներում միայն հաղթանակներ է տոնել եւ այժմ իր ակտիվում 16,5 միավոր ունի: